ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

Только в результате правильного восприятия и применения счетного плана и дифференцированной методологии возможно осуществить бухгалтерский учет требуемого уровня в общественном секторе, в том числе и формулировка (проводка) синтетического учета.

GAGIK NALBANDYAN

METHODOLOGY OF DIFFERENTIATION IN SYNTHETIC BOOKKEEPING OF EXCHANGEABLE AND NON- EXCHANGEABLE TRANSACTIONS IN PUBLIC SECTOR ORGANIZATION

Key words: *program cost, cash flow, cash outflow, exchangeable transactions, budget financing, expenses,revenue, debit and credit acclaim*

Summarizing the article, it follows from the above mentioned that while formulating synthetic bookkeeping records if economic activity of publice sector entities one should be guided by the methodology of distinct differentiation of transaction features and objectives.

It is based on financing and financed, service rendering and service obtaining exchangeable and non- exchangeable transactions and their featuring versions.

A similar principle has been applied to design the accounting keeping lists of public sector entities in which each issue and sub-type is given a separate account and code.

Only through differentiational methodology and the right perception and application if the accounting plan is it possible to provide the necessary level for public sector entities ' bookkeeping as well as the formulations of synthetic bookkeeping.

ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՍՐԲՈՒՀԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
Ասպիրանտ, ՀՊՏՀ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ, ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *ֆինանսական ներգրավվածություն, միկրոֆինանսավորում, ֆինանսական խորություն, ֆինանսական ծառայություն, կյանքի որակ, տնտեսական աճ*

Ներկա պայմաններում միկրոֆինանսավորումը, ֆինանսական ներգրավվածությունը և տնտեսության ֆինանսական խորությունը հսկայական ներուժ են պարունակում ոչ միայն բնակչության աղքատ հատվածի կենսապայմանների և կյանքի որակի բարելավման, այլև տնտեսական աճի ապահովման համար: Հոդվածում քննարկվում են նշված

ցուցանիշների փոխադարձ կախվածությունները, ինչպես նաև մաթեմատիկական ժամանակակից մեթոդների օգնությամբ տրվում են դրանց գնահատականները ՀՀ տնտեսության համար և կատարվում համապատասխան եզրահանգումներ:

Ներկայումս ինչպես գլոբալ, այնպես էլ ազգային մակարդակով տնտեսական քաղաքականություն մշակողները ֆինանսական ներգրավվածությունը դիտարկում են որպես տնտեսական զարգացման կարևոր առաջնահերթություն: Մասնավորապես՝ 2013 թ. ազգային մակարդակով քաղաքականություն մշակող և կարգավորող ավելի քան 50 երկրներում ֆինանսական ներգրավվածության ռազմավարությունը հրապարակավ ճանաչվել է երկրի համար գերակա ուղղություն[1]: Իսկ օրինակ՝ 2013 թ. հոկտեմբերին Համաշխարհային բանկի խումբը լիարժեք ֆինանսական ներգրավվածության ելակետ համարվող հիմնական գործարքային ծառայությունների ընդհանուր հասանելիությունը հայտարարել է գլոբալ նպատակ՝ «աշխարհ, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է մուտք ունենալ և օգտագործել ֆինանսական ծառայություններն իր կարիքների համար՝ մեծացնելով իր հնարավորությունները և կրճատելով սոցիալական խոցելիությունը[2]»:

Ֆինանսական հատվածի ներգրավվածությունն աղքատության հաղթահարման առումով ապահովում է երկու լրացուցիչ խթաններ. առաջին՝ ֆինանսական հատվածի զարգացումը տնտեսական աճի շարժիչ ուժն է, որն անուղղակիորեն նվազեցնում է աղքատությունը և անհավասարությունը, երկրորդ՝ ստեղծում է համապատասխան մատչելի ֆինանսական ծառայություններ աղքատ հատվածի համար:

Ֆինանսական համակարգում բնակչության ներգրավվածության մակարդակն աշխարհի տարբեր երկրներում տարբեր է: Այսպես՝ չափահասների գրեթե 50%-ն ունի բանկային հաշիվներ, մինչդեռ մնացածները ֆորմալ բանկային հաստատություններում ներգրավված չեն, իսկ 2.5 միլիարդ ներգրավվածներն ունեն ֆինանսական ծառայությունների պահանջ, քանի որ առնչվում են այնպիսի խոչընդոտների, ինչպիսիք են ծառայությունների արժեքը, ֆորմալ հաստատությունների հեռավորությունը, պահանջվող փաստաթղթերի բացակայությունը և այլն: Աղքատները, կանայք, երիտասարդները և գյուղական բնակիչները ֆինանսական ծառայություններից օգտվելու ժամանակ, որպես կանոն, հանդիպում են լուրջ խոչընդոտների[3]:

Ֆինանսական ներգրավվածությունն ունի մարդկանց աղքատությունից հանելու լայն հնարավորություններ: Ըստ ՄակԿինոն Շոուի վարկածի՝ ֆինանսական ցածր խորու-

---

[1] World Bank. 2013a. Financial Inclusion Strategies Database. AFI (Alliance for Financial Inclusion). 2013. "Putting Financial Inclusion on the Global Map. The 2013 Maya Declaration Progress Report." Bangkok: AFI.

[2] World Bank. 2013b. "Universal Financial Access Is Vital to Reducing Poverty, Innovation Key to Overcoming the Enormous Challenge, Says President Jim Yong Kim." Press release, 11 October.

[3] ՄԱԿ-ը, 2005 թ. հայտարարելով միկրովարկավորման միջազգային տարի, կոչ է արել ազգային և տարածաշրջանային մակարդակով ընդլայնել միկրոֆինանսավորումը՝ զարգացում ապահովելու համար: Միկրոֆինանսավորման ծավալների ընդլայնման ներքո, սովորաբար, հասկանում են ծրագրերի ընդլայնում, որոնք ապահովում են փոքր վարկեր հասարակության ավելի շատ աղքատ շերտեր ընդգրկելու, այլ ոչ թե վարկի միջին չափն ավելացնելու նպատակով:

թյուն ունեցող երկրներում ֆինանսական հատվածավորման մակարդակը բարձր է, ֆինանսական ներգրավման «լեզվով» ասած՝ բարձր է ֆինանսական բացառումը: Վերջին հետազոտություններն ընդհանուր առմամբ հաստատում են, որ ներգրավված, խոր և արդյունավետ ֆինանսական շուկաներն ունեն կյանքի որակը բարելավելու, գործառնական ծախսերը նվազեցնելու, տնտեսական ակտիվությունը խթանելու և մասնավոր հատվածի նորարարական խնդիրները լուծելու մեծ ներուժ: Ֆինանսական շուկաների խորացումը բնութագրվում է ցածր որակով, երբ ֆինանսական ծառայությունները հասանելի են միայն մի քանի կազմակերպությունների կամ տնային տնտեսությունների:

ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության մասին պատկերացում կազմելու համար ուսումնասիրել ենք Համաշխարհային բանկի գլոբալ ֆինանսական ներգրավվածության տվյալների բազան, ինչը ցույց է տվել ֆինանսական ներգավվածության զգալի ցածր մակարդակ Եվրոպայի և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների համեմատությամբ[1]:

Միկրոֆինանսավորման և ֆինանսական ներգրավվածության միջև կապը ՀՀ-ում կարելի է գնահատել նաև լոգարիթմական ֆունկցիայով, և ինչպես երևում է գծապատկեր 1-ից, այս մեծությունների միջև կապը ուժեղ դրական է, այսինքն՝ մեկի աճը հանգեցնում է մյուսի աճին և ընդհակառակը:



Գծապատկեր 1. ***Միկրոֆինանսավորման և ֆինանսական ներգրավվածության կապը ՀՀ-ում, 2004–2015 թթ.***[2]

Վերջինս մեկ անգամ ևս ապացուցում է տարբեր հետազոտողների այն տեսակետը, որ միկրոֆինանսավորումը գործիք է, որը հանգեցնում է ներգրավվածության մեծացմանը և տնտեսական աճին:

[1] Global Financial Inclusion (Global Findex) Database Annual Last Updated 15-Apr-2015 World Bank Group.

[2] Այս և հաջորդ գծապատկերները կազմվել են ըստ Համաշխարհային բանկի «Աշխարհի զարգացման ցուցանիշների» տվյալների բազայի և ՀՀ ԿԲ «Հայաստանի ֆինանսական համակարգ-զարգացում, կարգավորում, վերահսկողություն» 2004–2015 թթ. հաշվետվությունների տվյալների:

Մի շարք հետազոտողներ ցույց են տվել, որ ֆինանսական զարգացումը բերում է աղքատության կրճատման և եկամուտների բաշխման անհավասարության նվազման: Օգտագործելով Ջինիի գործակիցը անհավասարության գնահատման համար, մեր կողմից բացահայտել ենք, որ միկրոֆինանսավորման և Ջինիի գործակցի լոգարիթմական ֆունկցիաները նվազող են, այսինքն, այս մեծությունների միջև գոյություն ունի հակադարձ կախվածություն: Դա նշանակում է, որ միկրոֆինանսավորման մեծացման դեպքում Ջինիի գործակիցը նվազում է: Նշենք նաև, որ Ջինիի գործակիցը տատանվում է 0-100 միջակայքում, և դրա մեծությունն ինչքան մոտ է 0-ին, այնքան տնային տնտեսություններն ունեն նմանատիպ եկամուտներ, և վերջիններիս բաշխումը հավասար է: Իսկ 100-ի դեպքում նշանակում է, որ բոլոր եկամուտները ստանում է մեկ տնային տնտեսություն: Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ ՀՀ-ում նախնական օգուտները սկզբում ստանում է հարուստ հատվածը, սակայն, միկրոֆինանսավորման մեծացմանը զուգընթաց, օգուտները ստանում են ավելի աղքատ հատվածները, և, ըստ ֆինանսական միջոցների հասանելիության ընդլայնման, անհավասարությունը կրճատվում է ավելի կտրուկ: Ենթադրվում է, որ կրճատվող անհավասարությունը խթանում է նաև ֆինանսական զարգացումը: Նշենք նաև, որ ֆինանսական հատվածում և՛ առևտրային, և՛ սպառողական վարկերի մեծ ծավալները միշտ չեն վկայում ֆինանսական ծառայությունների լայնորեն օգտագործման մասին, քանի որ վարկը կարող է կենտրոնացած լինել մեծ ընկերությունների և հարուստ անհատների շրջանում:



Գծապատկեր 2. ***Միկրոֆինանսավորման և եկամուտների անհավասարության միջև կախվածության գնահատականը ՀՀ-ում, 2004–2015 թթ.***

Ֆորմալ հաշիվների օգտագործումը թույլ է կոռելացված ֆինանսական խորության հետ, մասնավորապես՝ տնտեսության ստորին շերտերում, և տարբեր երկրների օրինակներն էլ վկայում են այդ մասին: Օրինակ՝ Վիետնամի մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 125 տոկոս է, մինչդեռ չափահասների միայն 21 տոկոսն ունի ֆորմալ հաշիվներ: Եվ ընդհակառակը, Չեխիայի Հանրապետությունը,

որն ունի համեմատաբար համեստ ֆինանսական խորություն (մասնավոր վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 56 տոկոս է) աչքի է ընկնում բնակչության ներգրավվածության բարձր մակարդակով (չափահասների 81 տոկոսն ունի ֆորմալ հաշիվներ): Սա վկայում է, որ ֆինանսական խորությունը և ֆինանսական ներգրավվածությունը ֆինանսական զարգացվածության տարբեր չափորոշիչներ են, և որ ֆինանսական համակարգերը կարող են դառնալ խորը՝ առանց բոլորի համար հասանելի լինելու: ՀՀ-ում ֆինանսական խորության և ֆինանսական ներգրավվածության կապը գնահատելու համար կառուցվել են նաև այս ցուցանիշների կապն արտահայտող լոգարիթմական ֆունկցիաներ: Որպես ֆինանսական ներգրավվածության ցուցանիշ ծառայել են 100 հազ. չափահաս բնակչին բաժին ընկնող բանկի մասնաճյուղերի և բանկոմատների քանակը: Որպես տվյալների աղբյուր ծառայել է Համաշխարհային բանկի ֆինանսական զարգացման ցուցանիշների բազան, իսկ վերլուծությունն ընդգրկում է 2004–2015 թթ.: Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, լոգարիթմական ֆունկցիան աճող է, այսինքն՝ կապը դրական է: Դա նշանակում է, որ ՀՀ տնտեսության համար ֆինանսական ներգրավվածության մեծացումը խթանում է տնտեսության ֆինանսական խորացումը: Մասնավորապես՝ առաջին մասից երևում է, որ ՀՀ բանկերի մասնաճյուղերի ավելացումը գրեթե նույն ծավալի փոփոխություն է առաջացնում ֆինանսական խորության մեծության մեջ:



Գծապատկեր 3. ***ՀՀ տնտեսության ֆինանսական խորության և ֆինանսական ներգրավվածության կապը, 2004–2015 թթ.***

Այսպիսով՝ քանի որ ցանկացած գործընթացի խորացմանն անհրաժեշտ պայմաններից մեկը մասնակիցների մեծ քանակի առկայությունն է, ապա ֆինանսական ներգրավվածությունը նույնպես ՀՀ ֆինանսական շուկաների խորացմանն անհրաժեշտ պայմաններից մեկն է: Ֆինանսական հատվածի զարգացումը և խորությունը հանգեցնում են տնտեսական աճի՝ հավաքագրելով խնայողությունները և վերափոխելով իրական ներդրումների: Իսկ ֆինանսական ներգրավվածության բարձրացումը պակասեցնում է տնային տնտեսությունների տնտեսական խոցելիությունը, խթանում է տնտեսական աճը, ինչպես նաև նվազեցնում է աղքատությունը և բարելավում կյանքի որակը:

Ամփոփելով կարող ենք անել հետևյալ եզրահանգումները:

Առաջին՝ ՀՀ միկրոֆինանսավորման և ֆինանսական ներգրավվածության միջև կապը դրական է, այսինքն՝ միկրոֆինանսավորման գործիքների զարգացումը կարող է խթանել ֆինանսների և ֆինանսական ծառայությունների հասանելիությունը: Երկրորդ՝ ՀՀ միկրոֆինանսավորման և եկամուտների անհավասարության միջև կապը բացասական է, այսինքն՝ միկրոֆինանսավորման ծավալների ավելացումը խթանում է եկամուտների բաշխման հավասարության մեծացումը: Երրորդ՝ ՀՀ-ում ֆինանսական խորության և ներգրավվածության միջև կապը դրական է, այսինքն՝ ֆինանսական ներգրավվածության մեծացումը դրական է անդրադառնում ՀՀ տնտեսության ֆինանսական զարգացման վրա: Եվ, վերջապես, հաշվի առնելով վերոնշյալը, տրամաբանական է եզրակացնել, որ միկրոֆինանսավորումը կարող է ազդել ֆինանսական խորության վրա ֆինանսական ներգրավվածության մեծացման միջոցով:

Կատարված հետազոտությունը ընդգծում է նաև միկրոֆինանսավորման, ֆինանսական խորության և ֆինանսական զարգացման կարևորությունը՝ ապացուցելով, որ դրանք կարող են դառնալ ռազմավարական որոշակի ուղղություններ, որոնցով հնարավոր կլինի ազդել աղքատության մակարդակի նվազեցման վրա: Աղքատութունը հիմնականում կենտրոնացած է ծայրամասերում և խուլ գյուղերում, և, օգտագործելով միկրոֆինանսավորումը, կարելի է մեծացնել ֆինանսական հասանելությունը, ֆինանսական խորությունը և դրանով իսկ ազդել աղքատության մակարդակի վրա: Չնայած միկրովարկավորման ծրագրերի հաջողությանն ամբողջ աշխարհում՝ ՀՀ-ում առկա է միկրոֆինանսավորման ոչ տեղին օգտագործում. այն գովազդվում է որպես աղքատների վարկային պահանջների բավարարման ձև: Իրականում ֆինանսական ծառայությունները, մասնավորապես՝ միկրոֆինանսավորումը պետք է դառնա հասարակական բարիք՝ աղքատների կենսապայմանների բարելավման, ֆինանսական ներգրավվածության և խորության մեծացման, ինչպես նաև տնտեսական աճի ապահովման առումներով:

АШОТ САЛНАЗАРЯН
СРБУИ ИСРАЕЛЯН

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ ФИНАНСОВОЙ ГЛУБИНОЙ , МИКРОФИНАНСИРОВАНИЯ И ФИНАНСОВОГО ВКЛЮЧЕНИЯ В РА

Ключевые слова: *финансовое включеие, микрофинансирование, финансовая глубина, финансовые услуги, качество жизни, экономический рост*

В нынешних условиях микрофинансирование, финансовое включеие и финансовая глубина экономики имеют огромный потенциал не только для повышения качества жизни бедных слоев населения, но и для обеспечения экономического роста. В статье обсуждается взаимозависимость этих показателей, а также с помощью современных математических методов даны их оценки для экономики Армении и оформлены соответствующие выводы.

ASHOT SALNAZARYAN
SRBUHI ISRAELYAN

RELATIONSHIP BETWEEN THE FINANCIAL DEPTH, MICROFINANCING AND FINANCIAL INCLUSION IN THE RA

Key words: *financial inclusion, microfinance, financial depth, financial services, quality of life, economic growth*

Under current conditions, microfinance, financial inclusion and financial depth of the economy have a huge potential not only to improve the quality of life of the poor, but also to ensure economic growth. The article discusses the interdependence of these indicators, with the help of modern mathematical methods, their estimates for the Armenian economy are given and the corresponding conclusions are drawn up.

ՌՈՒԶԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԳՈՐԾԸՆԹԱՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *առևտրային բանկ, կառավարում, բիզնես-գործընթացներ, գործընթացային բյուջետավորում*

Բյուջետավորումը կորպորատիվ կառավարման ժամանակակից տեխնոլոգիա է, որը հնարավորություն է տալիս իրականացնելու առևտրային բանկերի ֆինանսների կառավարման կարևորագույն գործառույթներ: Սակայն, բյուջետավորման ավանդական մոդելն ունի որոշակի թերություններ: Միջազգային փորձում ներկայումս լայն տարածում է ստանում գործընթացային բյուջետավորումը, որն ավանդականի նկատմամբ ունի ակնհայտ առավելություններ: Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործընթացային բյուջետավորման ներդրումն առևտրային բանկերում կապված է զգալի բարդությունների հետ:

Բյուջետային կառավարման համակարգը ներկայումս համարվում է ֆինանսների կառավարման առավել տարածված և հայտնի կառավարչական տեխնոլոգիաներից մեկը: Այն հնարավորություն է տալիս իրականացնելու կազմակերպության (այդ թվում՝ առևտրային բանկի) կառավարման կենսականորեն կարևոր գործառույթներ, մասնավորապես.

- բանկի առջև դրված խնդիրների հստակ ձևակերպում (որոնք պետք է բխեն վերջինիս ռազմավարական նպատակներից և ուղղված լինեն դրանց իրագործմանը),
- ռեսուրսների օպտիմալ պլանավորում,